


Փաստ. անվանումը	Ուսանողների իրավունքների պաշտպանի գործունեության կանոնակարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-18-01
Հաստատման ամսաթիվը	12/12/2014
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Ուսանողների իրավունքների պաշտպան
Ներդրման/իրականացման պատասխանատու	Ուսանողների իրավունքների պաշտպան



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
18/03/2016	Վերանայվել և լրացվել է կետ 2-ը	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ



## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

- 1.1. Եվրասիա միջազգային համալսարանի՝ Ուսանողի իրավունքների պաշտպանը՝ (այսուհետ՝ Պաշտպան) անկախ և անփոփոխելի անձ է որն իրականացնում է դասախոսների, վարչական աշխատակազմի և տնօրինության կողմից ուսանողի խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:
- 1.2. Համալսարանական մարդու իրավունքների պաշտպանը համարվում է հասարակական դիտորդ:
- 1.3. Ուսանողի իրավունքի պաշտպան կարող է դառնալ եվրասիա միջազգային համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող, ով ունի բարձր առաջադիմություն: Ուսանողի իրավունքի պաշտպանի թեկնածությունը պետք է պաշտպանվի ուսանողական խորհրդի առնվազն 15 տոկոսի կողմից:
- 1.4. Պաշտպանին ընտրում է ուսանողական կազմը՝ մեկ ուսումնական տարով: Պաշտպանի հերթական ընտրություններն (ընտրությունները անցկացվում են Հավելված 1. նախատեսված ընթացակարգով) անցկացվում են Պաշտպանի լիազորությունների ավարտին նախորդող մեկ ամսվա ընթացքում, իսկ արտահերթ ընտրություններ անցկացվում են Հավելված 1-ով նախատեսված դեպքերում:
- 1.5. Իրավունքների պաշտպանը անկախ մարմին է և իրեն հասցեագրված դիմում-բողոքները, դժգոհությունները քննարկում և լուծում է ղեկավարվելով արդարության և մարդասիրության սկզբունքներով, ինչպես նաև ՀՀ օրենքներով և ԵՄՀ իրավական ակտերով:
- 1.6. Իրավունքների պաշտպանը իր գործունեությունը իրականացնում է՝ գրավոր կամ էլեկտրոնային ներկայացված դիմումի, բողոքի կամ դժգոհության հիման վրա, գաղտնիության սկզբունքի ապահովմամբ:
- 1.7. Իրավունքների պաշտպանի գործունեությանը խոչընդոտելը անթույլատրելի է և կարող է առաջացնել օրենքով կամ Համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված պատասխանատվություն:

## 2. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Իրավունքների պաշտպանի իրավունքներն ու պարտականությունները՝

#### 2.2. իրավունքների պաշտպանը իրավունք ունի՝

- 2.2.1. ստանալու ցանկացած փաստաթուղթ և այլ գրառումներ /նյութական կամ էլեկտրոնային կրիչի վրա պահվող/, որոնք վարվում են Համալսարանում, բացառությամբ բժշկական կամ այլ անձնական կամ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների,
- 2.2.2. վեճի կողմերին հարցեր տալ և ստանալ լրիվ և իրականության համապատասխանող տեղեկություն վարչակազմի գործունեության, պրոֆեսորա-դասախոսական կազմի, ուսանողների և կոլեկտիվի այլ անդամների վերաբերյալ,
- 2.2.3. առաջարկելու վեճի լուծման հաշտեցման տարբեր ընթացակարգեր և հետևելու դրանց կատարմանը,
- 2.2.4. լսելու և քննարկելու ուսանողների դիմումները, դժգոհությունները և դիտողությունները համալսարանի աշխատանքի վերաբերյալ, այդ թվում՝ համալսարանի քաղաքականության, ուսումնական ցանկացած գործընթացի, համալսարանի և դասախոսա-պրոֆեսորական կազմի, վարչակազմի գործողությունների և գործունեության, ինչպես նաև՝ անարդար վերաբերմունքի վերաբերյալ,
- 2.2.5. օգնել ուսանողներին զարգացնելու կարողությունները և ունակությունները խնդիրները և վեճերը լուծելու, նպաստել քննադատական մտածողության զարգացմանը:
- 2.2.6. առաջարկություններ և որոշումների նախագծեր ներկայացնել Եվրասիա Միջազգային համալսարանի կառավարման և գիտական խորհուրդներին:

#### 2.3. իրավունքների պաշտպանը պարտավոր է՝

- 2.3.1. ուսանողների իրավունքների պաշտպանի գրանցամատյանում գրանցել ուսանողների կողմից ստացված դիմում-բողոքները,
- 2.3.2. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները իրեն ներկայացված դիմումների և բողոքների քննարկման դեպքում խորհրդապահական գաղտնիությունը ապահովելու համար, և ոչ ոք չունի այն տեղեկատվության մատչելիություն, որը

առկա է իրավունքների պաշտպանի մոտ դիմում-բողոքների քննարկման առնչությամբ,

- 2.3.3. լինել անկախ և անկողմնակալ և դիմում-բողոքները քննարկել ոչ միայն դիմումատուի շահերից ելնելով, այլև այն անձի, ում դեմ ներկայացվել է դիմում-բողոքը,
- 2.3.4. լինել հարգալից, համբերատար և հանդուրժողական իր գործունեության քննադատության վերաբերյալ,
- 2.3.5. չչարաշահել իր դիրքը, չօգտագործել իր հնարավորությունները ուսանողների կամ համալսարանի վարչակազմի կամ պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ ունեցած անձնական խնդիրները լուծելիս,
  - իրավունքների պաշտպանն ունի նաև օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ,
  - իրավունքների պաշտպանն իր գործունեության համար կրում է օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պատասխանատվություն:
- 2.3.6. Կազմակերպել դասընթացներ ուսանողների իրավագիտակցության բարձրացման համար:
- 2.3.7. Ուսանողի իրավունքների պաշտպանի համար նախատեսված անկյունում տեղադրել թարմ տեղեկատվություններ իրավունքների պաշտպանության վերաբերյալ:
- 2.3.8. Եռամսյակային հաղորդագրություն ներկայացնել Ուսանողական խորհրդի նիստում դիմում-բողոքների ստացման, քննարկման և արդյունքների վերաբերյալ:
- 2.3.9. Դիմում-բողոքների ստացման, քննարկման և արդյունքների, ինչպես նաև կատարած աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն ներկայացնել Եվրասիա Միջազգային համալսարանի Գիտական խորհրդին:

## **ՀԱՎԵԼՎԱԾ 1**

### **ԵՎՐԱՄԻԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

#### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողների իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ պաշտպան) ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:
- 1.2. ԵՄՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի ուսանողները, անկախ սովորելու ձևից, ընտրություններին մասնակցում են անմիջականորեն, կամքի ազատ արտահայտությամբ, կամավոր հիմունքներով:
- 1.3. ԵՄՀ-ն խթանում է, որպեսզի պաշտպանի ընտրություններն անցկացվեն մրցակցության և այլընտրանքի սկզբունքներով:
- 1.4. ԵՄՀ ՈւԽ-ի կանոնադրությանը համապատասխան ստեղծված ՈւԽ ընտրական հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում պատասխանատվություն է կրում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման օրինականության համար:
- 1.5. ԵՄՀ-ում ընտրություններն անցկացվում են միայն ԵՄՀ տարածքում:
- 1.6. Քվեարկության օրն ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում, տեղամասային կենտրոնում իրավունք ունեն ներկա գտնվել թեկնածուների վստահված անձինք, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

#### **2. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ**

- 2.1. ԵՄՀ-ում ընտրողների ցուցակները կազմում և վարում է Ուսումնական մասը:
- 2.2. Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ կուրսի կամ ֆակուլտետի ընտրողների ցուցակներում և միայն մեկ անգամ:
- 2.3. ԵՄՀ պաշտպանի ընտրությունների ընտրացուցակներում ընդգրկվում են ԵՄՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի ուսանողները:
- 2.4. ԵՄՀ Ուսումնական մասը քվեարկության օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրում է ընտրողների ցուցակների մեկական օրինակ՝ ըստ կուրսերի՝ ԵՄՀ ՈւԽ հատկացված համապատասխան մասում փակցնելու համար:

- 2.5. ԵՄՀ Ուսումնական մասի ղեկավարն ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ կուրսերի և ֆակուլտետների՝ տպագրված մեկ օրինակից (կազմված մատյանի ձևով) քվեարկության օրվանից մեկ օր առաջ տրամադրում է ընտրական հանձնաժողովի նախագահին:
- 2.6. ԵՄՀ ընտրողների և ընտրողների ստորագրած ցուցակներն ազատ են ծանոթության համար:

### **3. ԸՆՏՐՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԳՄԱԿԵՐԱՎՄԱՆ ԵՎ ԱՆԳԿԱԾՄԱՆ ՆԱԿԱՏԱԿՈՎ ԵՄՀ ՍՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԳՄԱՎՈՐՎՈՒՄ ԷՄ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ:**

- 3.1. Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով ԵՄՀ տարածքում կազմավորվում է մեկ ընտրատարածք:

### **4. ԸՆՏՐՈՒՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԿԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳԿԱԾՄԱՆ ԿԱԳՄԱԿԵՐՈՒՄ (ՆԵՐԱՊՅԱԿ՝ ԸՆՏՐՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՎՈՐԴՆԵՐԻ ԿԱԳՄԱԿԵՐՈՒՄ)**

- 4.1. Ընտրությունները նախապատրաստելու և անցկացնելու համար (ներառյալ՝ ընտրողների ցուցակները կազմելը) ծախսերը, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են ԵՄՀ հատկացումներից, ԵՄՀ ՈւՄ ֆոնդից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

### **5. ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

- 5.1. ԵՄՀ պաշտպանի թեկնածուներն իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ մեկ վստահված անձ: Վստահված անձը պետք է լինի ԵՄՀ ուսանող: Քվեարկության օրը վստահված անձն ազատվում է դասերից:
- 5.2. Համապատասխան թեկնածուի վստահված անձը քվեարկության օրվանից երկու օր առաջ պետք է ներկայացվի ընտրական հանձնաժողովին գրանցվելու և կնիքով վավերացված վկայականներ ստանալու համար:
- 5.3. Վստահված անձն իրավունք ունի՝
- խորհրդակցական ձայնի իրավունքով քվեարկության օրը մասնակցելու ընտրական հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա գտնվելու քվեարկության սենյակում,
  - ծանոթանալու ընտրական փաստաթղթերին,
  - բողոքելու ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները, անգործությունները,
  - ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին,
  - չմիջամտելու ընտրական հանձնաժողովի անդամի աշխատանքներին՝ ֆիզիկապես ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի՝ ընտրողների գրանցում իրականացնող, քվեաթերթիկ

հատկացնող անդամների, քվեաթերթիկը կնքող և քվեատուփը հսկող անդամի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին,

- քվեարկության արդյունքներն ամփոփելիս ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկած քվեաթերթիկների հաշվարկմանը, դրանցում կատարված նշումներին և քվեարկության ամփոփմանը:

## 6. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

- 6.1. Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով ԵՄՀ-ում կազմավորվում է Ընտրական հանձնաժողով:
- 6.2. Ընտրական հանձնաժողովն ապահովում է ուսանողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:
- 6.3. Ընտրական հանձնաժողովը բաղկացած է թվով 7 հոգուց, որոնցից 1-ը ԵՄՀ գիտական խորհրդի, 5-ը՝ ԵՄՀ ՈւԽ նախագահության և 1-ը՝ ԵՄՀ ռեկտորատի կողմից:
- 6.4. Ընտրական հանձնաժողովի անդամը քվեարկության օրն ազատվում է դասերից:
- 6.5. Ընտրական հանձնաժողովը՝
  - հաստատում է իր գործունեության աշխատակարգը և ընտրությունների կազմակերպման ընթացակարգը,
  - կազմում է ընտրությունների ժամանակացույցը,
  - սահմանում է քվեաթերթիկների և ընտրական այլ փաստաթղթերի ձևերը, դրանց լրացման և պահպանման կարգը,
  - անցկացնում, ամփոփում և հաստատում է ընտրությունների արդյունքները,
  - հաստատում է քվեատուփի ձևը,
  - հսկողություն է իրականացնում սույն ընթացակարգի միատեսակ կիրառման նկատմամբ,
  - գրանցում և վկայականներ է տալիս պաշտպանի թեկնածուներին, վստահված անձանց,
  - եռօրյա ժամկետում քննարկում է ընտրությունների կապակցությամբ ներկայացված բողոքները, ընտրությունների ելքի վրա ազդած կանոնակարգային խախտումների դեպքում որոշում է կայացնում ընտրություններն անվավեր ճանաչելու մասին,
  - իրականացնում է իրեն վերապահված այլ լիազորություններ:



## 7. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

- 7.1. Քվեարկությունն անցկացվում է ընտրական տեղամասում, ժամը 9:00-ից մինչև 15:30-ը: Ժամը 15:30-ին քվեարկության սենյակում գտնվող, բայց չքվեարկած ընտրողները քվեարկելու իրավունք ունեն:
- 7.2. Քվեարկությունը կատարվում է այդ նպատակով կահավորված սենյակում: Քվեարկության սենյակը պետք է լինի հնարավորին չափ ընդարձակ և բավարարի հետևյալ պահանջները`
- հնարավորություն ընձեռվի քվեարկության ողջ ընթացքում ապահովել ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների և քվեարկության ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքը,
  - ընտրական հանձնաժողովի բոլոր անդամներին և վստահված անձանց հնարավորություն ընձեռի իրենց տեսադաշտում պահել քվեարկության խցիկները, քվեատուփը, ինչպես նաև քվեարկության խցիկների մուտքն ու ելքը, դրանցից մինչ քվեատուփն ընկած հատվածը:
- 7.3. Քվեարկության խցիկը պետք է լինի այնպես, որ ուսանողը կարողանա ընտրատարածքում ներկա գտնվող անձանցից գաղտնի լրացնել քվեաթերթիկը: Քվեարկության խցիկում պետք է տեղադրվի սեղան, վրան` գրիչ, այն պետք է լինի բավարար լուսավորված:
- 7.4. Քվեաթերթիկի ձևը և շարադրանքը սահմանում է ընտրական հանձնաժողովը: Քվեաթերթիկը պետք է լինի տպագրված, պարունակի քվեաթերթիկի լրացման կարգի մասին ծանուցում: Քվեաթերթիկը պետք է պատրաստած լինի անթափանց թղթից: Քվեաթերթիկի հատման գծից վերև` ելունդի վրա, նշվում է քվեաթերթիկի հերթական համարը, իսկ հատման գծից ներքև` ձախ կողմում, այբբենական հերթականությամբ նշվում են թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը, իսկ աջ կողմում` նշումի համար նախատեսված դատարկ քառանկյուններ: Մեկ թեկնածու քվեարկելու դեպքում քվեաթերթիկում թեկնածուի ազգանուն, անուն, հայրանուն տողի ներքևում գրվում է «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը` յուրաքանչյուրի դիմաց աջ կողմում` նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունում: Քվեաթերթիկը թողարկվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան երկու օր առաջ:

## 8. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

- 8.1. Քվեարկության նախորդ օրն ընտրական հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է քվեաթերթիկները ստորագրող հանձնաժողովի երեք անդամներին, ովքեր պարտավոր են մինչև ժամը 17:00-ը ստորագրել բոլոր քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների բոլոր էջերը (ստորագրությունները դրվում են քվեաթերթիկների և ընտրողների ցուցակների

յուրաքանչյուր էջի հակառակ կողմում): Ստորագրված քվեաթերթիկները, ընտրողների ցուցակները, կնիքի փաթեթը պահվում են հատուկ չիրկիզվող պահարանում:

8.2. Քվեարկության օրը, ժամը 8:30-ին ընտրական հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ ընտրվում է ընտրողների գրանցում իրականացնող անդամին:

8.3. Քվեարկությանը ներկայացված յուրաքանչյուր ընտրող գրանցվում է հանձնաժողովի՝ գրանցման համար պատասխանատու անդամի մոտ գտնվող ցուցակում: Հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամը ստուգում է ուսանողական տոմսը կամ ուսումնական մասի կողմից ստացած մասնակցության թերթիկը, ընտրողների ցուցակում գտնում է նրա ազգանունը, անունը, հայրանունը, հերթական համարը, լրացնում է ուսանողական տոմսի կամ մասնակցության թերթիկի տվյալները, և ընտրողը ստորագրում է այդ տվյալների դիմաց:

8.4. Քվեարկության ժամանակ յուրաքանչյուր ուսանող ստանում է քվեարկության մեկ քվեաթերթիկ (քվեաթերթիկներ՝ միաժամանակ մի քանի քվեարկություններ անցկացնելու դեպքում): Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին: Վերջինս անջատում է քվեաթերթիկի (քվեաթերթիկների՝ միաժամանակ մի քանի քվեարկություններ անցկացվելու դեպքում) էլունդը, քվեաթերթիկի ներքևի հատվածը կնիքով վավերացնում և հանձնում է ընտրողին: Ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

8.5. Քվեաթերթիկում ընտրողն ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով միատեսակ նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմաց, ում կողմ է քվեարկում: Միայն լրացնելու դեպքում ընտրողը քվեաթերթիկը հանձնում է հանձնաժողովի նախագահին և ստանում նոր քվեաթերթիկ: Քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո ընտրողը քվեարկության խցիկում քվեաթերթիկը ծալում և մոտենում է քվեատուփին: Քվեատուփի մեջ քվեարկության թերթիկը գցելուց հետո ընտրողը դուրս է գալիս ընտրական տեղամասից: Միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացնելու դեպքում ընտրողը քվեաթերթիկը գցում է համապատասխան քվեատուփը:

8.6. Քվեարկության սենյակում չի կարող միաժամանակ երեք հոգուց ավել քվեարկող գտնվել:

8.7. Քվեաթերթիկը սահմանվում է անվավեր, եթե՝

- ստորագրված չէ,
- մեկից ավելի թեկնածուների օգտին նշումներ է պարունակում,
- մեկ թեկնածու քվեարկելու դեպքում միաժամանակ և՛ «կողմ եմ» , և՛ «դեմ եմ» բառերի դիմաց նշումներ է պարունակում,

- չի պարունակում որևէ նշում,
- պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում,
- չսահմանված նմուշի քվեաթերթիկ է:

## **9. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ**

9.1. Ընտրական հանձնաժողովն ընտրություններից հետո՝

- հաշվում է չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված և հետ վերադարձված քվեաթերթիկների ընդհանուր թիվը, ապա ընտրական հանձնաժողովի սահմանված կարգով մարում է քվեաթերթիկները, փաթեթավորում և կնքում է փաթեթը,
- հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում է քվեաթերթիկները, տեսակավորում է և հանձնաժողովի անդամների ներկայությամբ մեկ առ մեկ հաշվարկում է յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը: Հաշվարկված թվերը արձանագրվում և հրապարակվում են: